ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

XV ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

«Բիւզանդիոն» թերթի 1912 թ. հունվարի 31-ի և փետրվարի 2-ի համարներում լույս է տեսել Փոքր Ասիայի արևմտյան գավառներում հայոց հաստատման սկզբին վերաբերող կարևոր մի հիշատակարան-ժամանակագրություն, որն այնուհետև նույնությամբ վերահրատարակվել է Ա. Պիպերյանի և Վ. Եղիշեյանի խմբագրությամբ հրատարակված «Պատմագիրք Ատափաղար «Աստուածարեալ» քաղաքին» գրքում։ Որքան էլ անսպասելի է, 1399—1446 թվականների եղելությունները ականատեսի գրչով ներկայացնող այդ սկզբնաղբյուրը ժամանակին վրիպել է XV դարի ձեռագրական հիշատակարանների առաջատարը կազմող Լ. Խաչիկյանի և «Մանր ժամանակագրություններ» երկու հատորով հրատարակած Վ. Հակոբյանի ուշադրությունից և չի ընդգրկվել։

«Բիւզանդիոնի» հրատարակությունը ուղեկցվում է «Ժամանակագրության» բնագրին ու նրա ընդօրինակության պարագաներին վերաբերող Ս. քահ. Պուրմայանի ծանոթագրությամբ։ Ըստ այդմ՝ բնագիրը ղետեղված է եղել «Նշխար մատենագրութեանց. ի Մարուքէ վարդապետէ հաւաքեալ» խորագիրն ունեցող մագաղաթե ժողովածուում։ Այն պատկանել է տեր Հովհաննես Սղերդցի քահանային, որի մոտ էլ 1889 թ. նոյեմբերի 20-ին Երուսաղեմում գրչագիրը տեսել և Ատաբագարին ու շրջակա հայկական գյուղերին վերաբերող հիշատակարան-ժամանակագրությունը ընդօրինակել է Սեդրակ Կարապետ Սափրիչյանը։ Ապա երկու տասնամյակ անց «ի հաս ծերութեան» 1909 թ., «նորոգելով բուն օրինակէն որ առ իս գտանիւր թերթ առ թերթ՝ առանց շեղելով բնականէն», ուխտավորների հետ այն ուղարկել է Գրիգոր քահ. Ջուվանճյանին «իբր յիշատակ դպրատան ընկերիս»։ Այնուհետև ընդօրինակությունը անցել է Ս. քահ. Պուրմայանին և հրատարակության տրվել[1]։

Ձեռագրի մագաղաթյա լինելն ու խորագիրը հիշատակելուց բացի, Ս. Կ. Սափրիչյանն ունի մեզ համար կարևոր մի տեղեկություն ևս. ըստ նրա ծանոթության, ժողովածուն «900 թուականէ մինչև 1500 թուական (Բագրատունի) իշխանութեան բարձմանէն կ՚սկսէր, այլևայլ քաղաքաց այրուելէն ու ջարդուելէն եւ կամ փախելէն 28 տեսակ պատմութիւն կար գրքին մէջ»[2]: Ուրեմն՝ Մարուքե վարդապետը կազմած է եղել X—XV դարերի Հայոց պատմության այսօր գիտությանն անծանոթ մի համահավաք-compendium՝ քրսանութ միավոր ընդգրկմամբ։ Բնական է ենթադրել, թե բացի Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչից մինչև Թովմա Մեծոփեցի եղած և այսօր հայագիտությանը հայտնի պատմագրող հեղինակներից, որոնց թիվը 10—15-ի հազիվ հասնի, Մարուքեի ժողովածուում ներկայացված են եղել հիշյալ դարերի եղելությունները ներկայացնող այլ հեղինակներ ու երկեր ևս։ Նշված 900 և 1500 թվականները, անշուշտ, մասամբ «կլորացված» են, քանի որ «Բագրատունի իշխանութեան բարձմանէն» ասելով ծանոթագրողը նկատի ունի իրոք բարձրացումը և ոչ գրաբարյան «բարձումը» (վերացումը)։ Ըստ այդմ՝ պատմությունները պիտի սկսվեին 885/7 թվականների իրադարձություններով։ Ինչ վերաբերում է ավարտին՝ 1500-ին, ապա այստեղ էլ որոշ պայմանականություն կա. Ատաբաղարի և շրջակայից բնակեցման պատմությանը վերաբերող հիշատակարան-ժամանակագրությունները, որ կարող էր և ժողովածուի վերջին նյութը լինել, ավարտվում է 1466 թ. (ՌՆԿԶ, Հայոց ԹԺԳ, պիտի լինի՝ ԹԺԵ) արձանագրմամբ։

Ո՞վ էր Մարուքե վարդապետը, գիտական այդ մեծ հետաքրքրություն ու կարևորություն ներկայացնող պատմագրական ժողովածու կազմողը, հայագիտությանը առ այսօր հայտնի չէ։ Հր. Աճառյանի բառարանի ճանաչած վեց Մարուքե/Մարուգեներից[3] առաջին չորսը XIV դարի գործիչներ են, ուստի ժամանակագրորեն չեն կարող մեզ հետաքրքրող հեղինակը լինել (բացառող մյուս իրողությունները զանց են առնում)։ Հինգերորդը՝ Հավատվոր անապատի առաջնորդ և ս. Գևորգ տաճարի «ի կորդէ» կառուցող Մարուգե ճգնավորը, թվում է, նույնպես այլ անձնավորություն պիտի լինի, որովհետև վերջինս, հավանաբար, Արծկեի մոտակայքի վանական է և հայտնի «ճգնավոր» որակմամբ[4], մինչդեռ ժողովածուն կազմողը վարդապետ է, և, թերևս, Երուսաղեմի միաբան։ Վերջին պարագան մակաբե-

ում ենք այն տեղեկությունից, որ առկա է հիշատակարան-ժամանա-
կագրության բնագրում։ Այստեղ ասվում է, թե այն հեղինակող Տեր
Գրիգոր քահանան հաստատվել է Երուսաղեմում («փառք և գոհու-
թիւն արարչին մերոց տնօրէնութեան, զի ածելով հասոյց զմեզ եր-
կիր Աւետեաց իբր զորդիս Աբրահամու») և, ինչպես ասվեց, 1466 թ.
ավարտել հիշատակարանը։ Դժվար է պատկերացնել, թե այդ հիշա-
տակարանը՝ գրվելուց շատ չանցած, կարող էր հասնել կամ հայտ-
նի դառնալ Երուսաղեմից հեռու գտնվող մեկ այլ մատենագրի, ուս-
տի Մարուքե վարդապետին որոնելի ենք համարում երուսաղեմյան
գործիչների շարքում[5]։ Ձեռագրական աղբյուրներում այդ անունը
կրող անձի երկու հիշատակություն կա. մեկը Երուսաղեմի սուրբ
Փրկիչում 1426 թ. ընդօրինակված Սաղմոսարանի թուղթը խազող
«Հոգևոր եղբայր Մարուգէն» է[6], մյուսը՝ 1433 թ. Ճաշոցն ընդօրինա-
կող Տիրատուր աբեղայի հիշած «Սուրբ Յարութեան լուսարար Մա-
րուղէ ճգնազգեաց աբեղան»[7]։ Այս վերջինը պիտի որ արժանավո-
րությամբ օժտված և եկեղեցական շրջանակներում ճանաչում ունե-
ցող անձնավորություն լիներ՝ լուսարարի պատվավոր պարտակա-
նություն ստանձնած լինելու համար։

Ինչևէ, քանի դեռ ուրիշ ավելի հավանական թեկնածություն չու-
նենք, թույլատրելի է կարծել, թե քսանութ պատմական երկերի ընդ-
գրկմամբ, «Նշխար մատենագրութեանց» մագաղաթյա ժողովածու
կազմողը՝ ս. Հարություն տաճարի լուսարարն է, որը մինչև 1466—
ական թվականները կարող էր կենդանի լինել։ Բացառված չէ մեկ
այլ տարբերակ ևս. Գրիգոր քահանայի և նրա հոր՝ Գրիգոր դպրի
հիշատակարան-ժամանակագրությունը կարող էր ձեռագրի վեր-
ջում ավելացվել ոչ անպայման Մարուքե վարդապետի օրոք ու նրա
իսկ ձեռքով։ Դժբախտաբար, ձեռագրի ուր գտնվելն այսօր անհայտ
է, իսկ «Բիւզանդիոնում» եղած նրա նկարագրությունը հնագրական
որևէ տեղեկություն չի բովանդակում։

Հիշատակարան-ժամանակագրության առաջին հրատարակիչն
ու վերահրատարակության խմբագիրները վերահասու են սույն բը-
նագրի հաղորդումների կարևորությանը, բայց նրա վավերականու-
թյան փաստումը թողնում են մասնագետ հետազոտողին։ Ս. քահ.
Պուրմայանը ուղղակի հասցեագրումով ասում է. «Առանց յաւակ-
նելու ներկայ գործին մասին թէ անիկա անպատճառ վաւերականու-
թիւն կրնայ ունենալ բոլորովին, մենք նոյնին հրատարակութիւնով
հնասէր-բանասէր, մանաւանդ Արմաշի նախնական պատմութեան

հարցովը զբաղվող Տ. Օրմանեան Սրբազանին խորին ուշադրութեան յանձնելով, կ՚փափաքինք անոր որոշ կարծիքն ունենալ, հասկանալու համար, թէ որքան ճշմարիտ կամ ճշմարտանման են Մարուքէ վարդապետի մը քաղած տեղեկութիւններն Ատափազարի Հայոց և շրջակայից գաղթականութեան ծագումին մասին»[8]: Մ. Օրմանյանը, սակայն, հանգամանքների բերումով այլևս առիթ չի ունեցել անդրադառնալու 1890-ական թվականների ավարտին գրած Արմաշի պատմության իր ձեռագիր աշխատությանը, ուստի տասնամյակներ հետո Գ. Բամպուքճյանի խմբագրությամբ կատարված հրատարակության մեջ այս աղբյուրին վերաբերող խոսք չկա[9]։ «Բիւզանդիոնի» հրապարակմանը ծանոթ և բնագրի վավերականությանը մասնակիորեն անդրադարձած միակ հայագետը, եթե չենք սխալվում, Հայկ Պերպերյանն է[10]: Սեբաստիայի 1398—1401 թվականների պատմության աղբյուրները քննարկելիս նա համառոտակի վերապատմում է հիշատակարան-ժամանակագրության սկզբի հաղորդումը՝ Լենկթեմուրի զորքերի կողմից Սեբաստիան պաշարելու և տիրանալուց հետո 4—5 հազար «անձինս ի կենդանոյն» հողի տակ հեղձելու մասին։ Հայկական աղբյուրներից (հիշատակարաններ, Մեծոփեցի, Խլաթեցի) բացի, այդ իրողության մասին պատմում են ժամանակակից բազմալեզու այլ սկզբնաղբյուրներ, և Հ. Պերպերյանը նրանց համադրմամբ ու քննությամբ հավաստում է իրողությունը։ Ուրեմն՝ հայր և որդի Գրիգորների գրառման այդ սկզբնական մասը ընդհանուր առմամբ ճիշտ է, սակայն գրառված պիտի լինի անցուդարձից մի քանի տասնամյակ հետո (այդ մակաբերվում է տեքստում եղած մանրամասներից ևս)։ Հեղինակների նպատակը Սեբաստիայի գրավումը մանրամասնելը չէ, այլ Բյութանիայում սեբաստացի 400 ընտանիքի հաստատման պարագաները ներկայացնելը. «Ահա թողում դուզնաքեայ շարակարգեալ անցքս ի յետագայիցն, որք ընթեռնուն զսա՝ ի միտս ածցեն, թէ զինչ նեղութիւն և դիպուածաք եկաք աստ բնակել, կամեցաք և եղաք ընդ քրիստոնեայս Քրիստոսի ծառայ և ընդ մուսլմանս՝ մուսլման, մինչ անցաք ընդ նեղ պողոտայէն։ Կամէի բազումս գրել, բայց նախ պաշտաւնս ծանր է և երկրորդ՝ ծերացայ յոյժ, ոչ ևս կարող եմ շրջիլ աստ և անդ...»։

Առանձնակի ուշադրության է արժանի մանավանդ այս վերջին պատճառաբանությունը, թե ծերացել է և «աստ և անդ» շրջել չի կա-

րող, ուստի «բաղումս գրելուց» (իմա՝ շարադրանքը ծավալելուց) խուսափում է։ Եվ Հիրավի, տեղանքի, զբաղմունքի, բնակության Համդամանքների, երդերի քանակի, երթևեկի, Հույների ու Թուրքերի Հետ ունեցած ՛առնչությունների, Հիշատակվող անձանց ինքնության և այլ դրվագներում Հեղինակներր, մանավանդ 1440-ին քաՀանա ձեռնադրված Տեր Գրիդորը, այնքան փաստացի են, որ առանց «աստ և անդ» շրջելու անկարելի պիտի լիներ ընդարձակել շարադրանքը։ Բայց տեղեկատվության այն գումարը, որ ներկայացնում է այս Հիշատակարան-ժամանակագրությունր, ինքնին ոչ միայն կարևոր, այլև շատ դրվագներում եզակի է։ Եթե անգամ մի կողմ թողնենք Ատաբաղարի (երբեմնի Տոնիկաշենի) և նրա շրջակա Հայկական գյուղերի (այդ թվում և Արմաշի) Հիմնադրության Հանգամանքներին վերաբերող տեղեկությունները, որպիսիք անծանոթ էին այլ աղբյուրներից, ապա գոնե երեք դրվագ պիտի առանձնացնել ու մանավորապես դնաՀատել.

ա) Պրուսայի XV դարի առաջին կեսի Հայոց Հոգևոր առաջնորդին Հիշատակող մինչև այժմ մեր ունեցած աղբյուրները Հովակիմ եպիսկոպոսից դատ (որը և պատրիարքության Հիմնադիրը դարձավ) որևէ անուն չէին տալիս, մինչդեռ, պարզվում է, 1440 թվականին առաջնորդ է եղել Աբրահամ արքեպիսկոպոսը, որից և Հիշատակադիրը ու «Տիգրան անուամբ մի ազգային» քաՀանայական ձեռնադրություն են ստացել։ Այժմ մենք Հնարավորություն ունենք ստուգելու այն ժամանակագրությունը, որ Հովակիմի կապակցությամբ առաջադրել է Բ. Կյուլեսերյանը[11]: Ըստ այդմ՝ Հովակիմ արքեպիսկոպոսը գոնե 1438 թվականից արդեն Կ. Պոլսի առաջնորդությունն էր ստանձնել, և Պրուսայի առաջնորդական պաշտոնում նրան փոխարինել էր Աբրահամ արքեպիսկոպոսը։ Հետևաբար վերանայելի են այն բոլոր ենթադրությունները, որոնք Հովակիմին 1461-ին են Պրուսայից Կ. Պոլիս բերում։ Միանգամայն իրավացի է Բ. Կյուլեսերյանի եզրաՀանգումը. թե Պատրիարքության Հիմնումից շատ առաջ Կ. Պոլսում Հայոց առաջնորդարան կար։ Աղբյուրներից անծանոթ ու անՀայտ էր նաև նշանավոր Արմաշի ուխտատեղին Հաստատելու պատմությունը։ Գրիգորի գրառումից Հայտնի է դառնում, որ գյուղը նախապես Հունարենակ է եղել՝ Դոսպիթ անունով, բայց 1416-ին Թուրքերից նեղված Հույները այրել են այն ու փախել։ Նրանց փոխարինել են Մարաշից գաղթած Հայերը, ո-

րոնք՝ և հիմնել են ս. Աստվածածնի մատուռը (Արմաշի ապագա վանքի տեղում) և փոխան քահանայի ածին առ իւրեանց զծերունի Սրապիոն սրբակեաց անապատական կուսակրաւն վարդապետին»։ Ի դեպ, այս վարդապետի մասին ևս այլ աղբյուրներից ցայսօր տեղեկություն չունենք։

բ) Հիշատակարան-ժամանակագրությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում, թե օսմանյան տիրապետության աստիճանական ծավալումը ինչպես էր անդրադառնում հույն բնակչության ճակատագրի վրա։ Նրանց մի մասը հարկադրված էր լքել գրավված տարածքները և նոր բնակավայրեր որոնել։ Տեղում մնացողներից շատերը ստիպված էին մահմեդականություն ընդունել։ Տարեցտարի նվազող Բյուզանդական կայսրությունը այլևս անկարող էր պահպանել գավառների հույն բնակչության ներկայությունը, ուստի սեբաստահայերին բնակատեղի և աշխատանք տվող Թուրք Փեյզի աղան ասում է. «Յորժամ բարձցի խոշընդոտ տէրութիւնն (իմա՛ Բյուզանդական կայսրությունը) սոքա ամենեքին կամ այրենք, եւ կամ աքսորեմք, եւ կամ ջարդեմք։ Եթէ կամին զանձինս իւրեանց ապրեցուցանել՝ ընդունելով ընդունին զսուրբ կրօնն մեծ ու սուրբ մարդարծին Մուհամմետի»։ «Ի կողմանս Բիւթանիոյ» հայոց և «այլազդի մսուլմանց» ներդաշնակ ուղեկցվում էր հույների արտագաղթով («իսկ Յոյնք մեկնէին ի տեղոջէ իւրեանց. աւերեցան քաղաքք»), մինչ «ոմանք ի Յունաց ընդունէին դէնն Մուհամմէտի տաճկանային»։ Ընդ որում՝ հայերի նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողականությունը պայմանավորված էր ոչ թե էթնիկական կամ դավանական պատկանելությամբ, այլև դավանական հողի վրա հայոց ու հույների միջև առաջացած փոխադարձ մերժումի պարագայում թուրքերի կողմնորոշմամբ՝ թշնամու ախոյանին իրենց բարեկամը կամ դաշնակիցը նկատելու առօրեականությամբ։ Կայսրության տարածքը նվաճելու ճանապարհին, բնականաբար, թուրքերի հիմնական թշնամին հույներն էին. «ի թիւ տեառն ՌՆԼ (1430)Սիսեան գիւղն յունաց աւերելով այրեցին այլազգիք (իմա՛ թուրքերը—Ս. Մ.) ափսոս, զի գիւղն այն յոյժ գեղեցիկ էր՝ յանդէպ Սապանճի գիւղն, որ զճանապարհաւն տան Աստուածածնայ ի վերայ բարձր բլրոյ անուն աւերակին անուանեցին Չորթլան, և մսլման մեծատունք Ճ (100) տան չափ անդ բնակեցան»։ Գլխահարկ սահմանելիս (տասնհինգ տա-

ռեկանից մինչև վաթսունհինգ տարեկան պետք է վճարեին 200 փարա) թուրքերն այլևս հայ ու հույն չէին ջոկում, հարկում էին բոլոր քրիստոնյաներին, միայն այն տարբերությամբ, որ հույն աղքատները ևս պիտի վճարեին, իսկ հարուստների վճարելիքը 250 փարա էր։ Այսինքն, գլխահարկի այս մասամբ տարբերակված գանձումով թուրքերը քաջալերում էին ընչազուրկ հայերի հաստատումը իրենց հողերի վրա և նույնչափ խթանում աղքատացած հույների հեռացումը սեփական բնօրրանից։ Կ. Պոլիսը գրավելուց հինգ տարի անց (1458 թ.) «սկսան հարկս առնել ի ննջեցելոց՝ 10-ական փարա ի մեծաց, իսկ ի փոքունց 6-ական փարա», ընդ որում «առանց հրամանագրի դենպետին թաղելոյ հրաման ոչ գոյ»։ Ըստ երևույթին առայսօր հայտնի սկզբնաղբյուրներից քննարկվող հիշատակարանժամանակագրությունը միակն է, ուր պահպանվել է դենպետի այդ հրամանագրի տեքստը՝ հայատառ թուրքերենով։

դ) Քաղկեդոնականություն դավանող հայերի մասին մեր ունեցած տեղեկությունները չափազանց քիչ են։ Ն. Մառի, Ն. Ակինյանի և այլոց աշխատություններում ամփոփված նյութը հատակոտորային է, գերազանցապես նրանց մշակութային գործունեությանը վերաբերող[12]: Գրիգոր դպրի գրառումը միանգամայն նոր տեղեկություն է հաղորդում քաղկեդոնական հայոց բնակության վայրի, նրանց թվաքանակի ու միջէթնիկական-միջդավանական հարաբերությունների մասին։ Ահա այդ դրվագն ամբողջությամբ. «ՊՆԹ (1409) թուականին փրկչական եկին առ մեզ Ջայթիկ (իմա՝ ծայթ/ծաթ) Հայք. այլազգիք անուանէին «տինի էյրի էրմէնիլէր»։ Նոքա էին ՌԾՁ (1506) ընտանիք, բաժանեալ ի խումբս-խումբս բնակեցան ի լերին Կէյվէու եւ ի լերինս Սէկիրթլիու՝ ապառաժուտ լերին, մերձ յադարակին Փեյզի ակային։ Նոքա եւ[ս] չար ակամբ հայէին առ մեզ։ Իսկ Յոյնք՝ նոքա եւս ատէին. վասն բառբառելոյ ի հայ լեզուի արտասանութեան կոչէին ի Յունաց Արմէնոս էփտիխոս, զմեզ կոչէին Արմէնոս Արիոս։ Ինչ-ինչ բարուրանս բարդէին ի վերայ ազգին Հայոց, մինչ դի աղքատ[ք] որ մուրացիկ լինէին՝ ոչ գային առ մեզ, եւ զհաց մեր ոչ կամէին ուտել բազումք»։ Այսպիսով, հայ քաղկեդոնականների այդ ստվար զանգվածը դավանական հողի վրա այլևս հեռացել էր իր բնիկ էթնիկ միջավայրից, բայց և չէր նույնացել կամ ձուլվել համադավան հույների հետ և շարունակում էր հայալեզու մնալ։ Որքան գիտենք, Կեյվեի և Սեկիրթլիի լեռներում ծաթ հայոց առկայության մասին միջնադարյան այլ աղբյուր հայտնի չէ։

Հայր և որդի Գրիգորների կազմած ժամանակագրություն-հիշատակարանը բազում առումներով կարևոր սկզբնաղբյուր է, արժանի առավել հանգամանալի ուսումնասիրության։ Ստորև անհրաժեշտ սրբագրումներով ու վերականգնումներով հրատարակում ենք այդ մոռացված բնագիրը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Մ. քահ. Պուրմայանի մասին տե՛ս «Պատմագիրք Ատափազար «Աստուածաբեալ» քաղաքին», Փարիզ, 1960, էջ 151—153։*

[2] *Անդ, էջ 33։*

[3] Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1948, էջ 268—269։*

[4] *«ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451—1480 թթ.)։ Կազմեց* Լ. Ս. Խաչիկյան, *Երևան, 1958, էջ 140։*

[5] *Աննպատակ ենք գտնում նաև 1413 թ. Ապահունիքում գրված հիշատակարանի (տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց* Լ. Ս. Խաչիկյան, *Երևան, 1955, էջ 146) հնարավոր թեկնածությունը։*

[6] *«ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց* Լ. Ս. Խաչիկյան, *Երևան, 1967, էջ 367։*

[7] *«Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատ. IX, կազմեց* Նորայր Արք. Պողարեան, *Երուսաղէմ, 1979, էջ 549։*

[8] *«Բիւզանդիոն», 31 փետրուարի 1912։ Նաև «Պատմագիրք...», էջ 24։*

[9] *«Շողակաթ», 1957—1958 թթ.։*

[10] Հայկ Պէրպէրեան, *Սեբաստիա (1398—1401),* «Armeniaca»: Melanges d'etudes armeniennes, Venise, 1969, p. 267—288, *մասնավորապես՝ էջ 277—278։*

[11] Բ. Կիւլէսէրեան, *Կ. Պոլսի հայ պատրիարքութեան ծագումը և առաջին պատրիարք Յովակիմ արքեպիսկոպոս, «Հանդէս Ամսօրեայ», 1924, էջ 432—441։*

[12] Н. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1996, ст. 209—308. Ն. Ակինեան, *Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 225—226։*

[ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԻՒԹԱՆԻՈՑ ՀԱՅՈՑ, ՇԱՐԱԿԱՐԳԵԱԼ Ի ԳՐԻԳՈՐԷ ԴՊՐԷ ԵՒ ԳՐԻԳՈՐԷ ՔԱՀԱՆԱՅԷ]

Յամին ՌՅՂԹ (1399)[1] Փրկչին Աւսմանեան տան հարազատի թագաւորութեան Սուլթան Պայազիտի Բիւթանիոյ մայրաքաղաքին Պրուսայու Երեւեցաւ արիւնառուշտ նեռն ի հիւսիսոյ Հայաստան աշխարհէ։ Անգութ ճիւաղն եւ անհաւատն Լէնքթիմուր[2]՝ արբանեակն սատանայի, իբր զմարախ հաւաքեալ Ջղաթի զզաւրս իւր, վարեաց ի վերայ Փոքուն Հայոց, գուն գործեաց նման նեռի՝ առնել զաւարս եւ կողոպուտ ի բազմաց քաղաքաց։ Եւ բազմիցս արեան հեղութեամբ եկն ի վերայ քաղաքին Արծրունեաց Սենեքերիմայ արքային Հայոց՝ աւարել եւ զկողոպուտ առնել։ Ի վերոյիշեալ թուականէ փրկչական յամսեանն Ահեկանայ Ժ-ին, յաւուր Յարութեան Փրկչին ի միաշաբաթոջ եկն պաշարեաց զզուարճալի քաղաքն մեր Սեբաստիայ, յետ բազմիցս անվեհերոտ զոլով դէմ եդեալ դիշխանի Սեբաստայէ մեր Սուլէյմանի, զոր ի սուլթան Պայազիտայ արքայէ Թուրքաց էր եդեալ։ Հունկ յետոյ անճարացեալ կուսակալին, հաստատեալ զդաշինս ընդ անգութ վայրենի ճիւաղին Լէնքթիմուրայ՝ առանց արեան հեղլոյ յանձն առնել զքաղաքս ՌՅՂԹ յամսեանն Մարերի յութ զրականս բաղաքին յանձնեցին։ Բայց յետ մի ինչ յաւուրցն անցանելոյ անողորմ ճիւաղն դրժեալ յուխտի իւրում, հրամանս խիստս եհան զաւրաց իւրոց պեղել գուբս մեծամեծս մինչ Տ-Ր (4000—5000) անձինս ի կենդանոյն ծածկելով հեղձոյց ի ներքս հողոյ, դառն տանջանաւք առանց արեան հեղլոյ մատնեաց ի մահ, զոր մեղաւոր գրիչս ոչ կարեմ ի գիր դրոշմել ի յիշողութիւն[3] յետագայ Արամազնեայց։ Ո՜հ, ո՜վ քաղաքիդ փառաւորելոյ, ճոխացեալդ Սեւաստ, մայր ամենայն քաղաքաց, ղի՞ արդ աւերացան եկեղեցիքդ ի քեղ, ո՜հ, ո՞ւր իմաստասէր քահանայք, ո՞ւր ընչեղ[4] վաճառականքդ, է՞ր եղեւ ըսպանումն քաջացդ ոչ խնայեալ ծերոց եւ տղայոց, է՞ր մերկացար ի զարդուցդ։ Անկար է ինձ հանդուրժել առանց կական բառնալոյ. զայս ամենայն նեղութիւն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։

Ո՞վ կանխագուշակդ Ծրեմիաս, ո՞ւր ես, առ ղքնարդ եկ առ մեզ հեծել եւ ողբալ ընդ մեզ՝ զդառնաղէտ անցս անցուցաք...։

Բ. շաւիղ-պանդխտութիւն

Զայս ամենայն տառապանաց եւ կոտանաց լեալ էր մեզ իբր անկենդան աղանցս Արամեանց ղաւեր եւ զապականութիւն։ Սուղ ինչ ժամու գիշերոյ ի խորհուրդ մտեալ ի տան Զօջ Տանիկի յաղագս դաղթելոյ՝ ի տար աշխարհ, լաւ համարեցաք աղքատութեամբ եւ ի տառապանս կրել յերկիր օտար, քան աստ ի լլկումն ընտանեաց մերոց ի ձեռս անաւրէն բռնաւորաց։ Բայց ո՞ւր՝ ոչ է մեզ գիտել, այլ կամք Տեառն եղիցի. լաւ իմն համարեցաք ի կողմանս Բիւթանիոյ ընդ հովանեաւ Աւսմանեանց ապրիլ, քան աստ։ Ի թուին փրկչական ՌՆ (1400) յամսեանն Մարերի յուղի անկեալն տամբ ընտանեաւք ի Բիւթանիոյ [հասաք] զստորոտ լերինն Մաքսիմինեայ՝ մերձ ի գյուղաքաղաքին Սարիու Տողանիս կոչեցեալ աւանին Յունաց ի մէջ գետոց Սապոնճիու եւ Սաքարիս կոչեցելոց[6]*։ Առասպելաբանի ի Յունաց զգետ Սապոնճիու, թէ աստ, ասէն, էր ամրանոց թագաւորին Յուլիանոս։ Ծթէ կամիս տեսանել ինչ՝ յառաւօտեան պահուն նիստ ի նաւակ, երթ ի մէշ գետոյ ական, հայեա ի խորութիւն շրոյս տեսանել [զ]քարինս մարմարեայ եւ զբեկորս բազումս եւ կճճեայ սիւնս՝ զի էր ի հնումն բաղանիս ուրացողին Յուլիանոս։ Տէր կործանեաց սա վասն ուրանալուն որդւոյն Աստուծոյն. այն սնոտիմաստ բանից ոչ է իմ ընծայեալ զհաւատս անբիծս։*

Իսկ գոլով գլխաւոր մեր ղՋօջ Տանիկ եւ մաքրակրօն քահանայք Տէր Կարապետ, Տէր Նշիկ, Տէր Գաբրիէլ եւ ԴՃ (400) ընտանեաւք գալով, կազմեցաք զվրանս մեր ի նոր հայրենիս մեր անտառապատ եւ անուանեցաք Տանիկապատ, զի յոյժ գեղեցիկ էր, եւ ընդ մեզ ունէաք մասն Սրբոյ Կարապետի ոսկերց եւ մասն Սրբոյ Նշանի Հռիփսիմեայ[6]*, կազմեալ էր մեզ ձեռամբ մերով փոքրիկ մատուռ, անուանեցաք զմատունս սուրբս։ Ուստի ոչ գոլով մեզ զորավիգ, ձեռն ետուն մեզ մուսլմանք*[7]* հաւատով մահմէտական Թուրքք, զի սիրէին զմեզ յոյժ։ Կռապաշտ Յոյնք եւ[ս] էին մեզ հարեւան, նոքա եւս խոժոռ ակամբ հայէին մեզ, եւ մեք անուանէաք զնոսա զեղբարս ի Քրիստոս, եւ նոքա՝ այսինք Սարիտողանցի Յոյնք, կամէին հասուցանել մեզ վնասս բազումս, բայց երկնչէին ի Տաճկաց, մանաւանդ ի Փէյզի էփէնտիոյ։ Իսկ գալով՝ Սապոնճիաբնակ Յոյնք*

խաժք կային ի մեծատանց Տաճկաց. նոքա ոչ կարէին վնասել, որ հեռի էր ի բնակութեանց մերոց։ Սապոնճի ասի, [զի] ամբողջովին արհեստիւ աւճառագործ էին, այլազգիք կոչէին Սապոնճիլէր։ Էր անուն քաղաքին Մաքսիմինեայ՝ յանուն դստեր Մաքսիմիանոսի արքային ի Հնումն։

ՌՆԴ (1404) թուին տէրունական եղեւ տարափ իմն փոթորիկ, գմբանս մեր մաղապուրծ զերծաւ, հաւաքելով անկաք ի չու[8] առժամանակեայս, զի եղեւ ջրհեղեղ յաղագս հորդելոյ Սաքարիս գետոյն։ Ի նոյն ամի բազումս վնասեցաք ի յանդեայց, եղեն աւգնական մեզ այլաւողիք, մանաւանդ Փեյզի ակայն։

ՌՆԹ (1409) թուականին փրկչական եկին առ մեզ Զայթիկ Հայք. այլազգիք անուանէին «տինի էյրի էրմէնիլէր»[9]: Նոքա էին ՌՇԶ (1506) ընտանիք, բաժանեալ ի խումբս խումբս բնակեցան ի լերին Կէյվէու եւ ի լերինս Սէկիրթլիու՝ ապառաժուտ լերին, մերձ յագարակին Փէյզի ակային։ Նոքա եւ[ս] չար ակամբ հայէին առ մեզ։ Իսկ Յոյնք՝ նոքա եւս ատէին. վասն բառբառելոյ ի հայ լեզուի արտասանութեան կոչէին ի Յունաց Արմէնոս Էփտիխոս, զմեզ կոչէին Արմէնոս Արիոս։ Ինչ-ինչ բարուրանս բարդէին ի վերայ ազգին Հայոց, մինչ զի ազքատ[ք], որ մուրացիկ լինէին՝ ոչ գային առ մեզ, եւ զհաց մեր ոչ կամէին ուտել բազումք։

Տէր է որ շինէ զտուն տնանկի. սոյն Փեյզիական էր կարի յոյժ մեծատուն, զազգս Արամեան, մանաւանդ զտանուտէր Ջոջ Տաւնիկս՝ հայրն մեր սիրեաց ի սրտէ, կամէր ամբողջովին հայանալ, զիւրսն եւ մերայինսն ոչ որոշիւր։ Իս՝ մեղաւոր դպիր Գրիգորս, բազմիցս երթայի յաղաքակս նորա ուրայութեան, եւ ոչ գոյր թիւ անասնոց՝ կով. ոչխար, արջառ եւ այլն։ Կիսով ժամաւ գոյր տեղի յագարակէ իւրմէ էր ախոռատեղի, անուանիւր Թամ, տարածութիւն արտորէից հասնիւր Դ (4) ժամու տարածութեամբ դեպի լերինն Դոսրիթ, մերձ առ ծերունաղարդի Ահմատայ, որ յորջորջիւր Փիրի Ահմատ։ Սա էր եւս մեծատուն, բայց յաշխարհի անզաւակ եւ անժառանգ գոլով, պարգեւեաց Փէյզի ակայի որդւոյ[10] Ապտիւլ Քէրիմայ մինչեւ ցմահ զամենայն հողս տան իւրոյ հոգայցէ եւ յետ այնու իւր անուամբ կոչեսցի զագարակն, ոչ յիշեսցի Պըն[11] Փէյզի, այլ Պրն Ահմատ Ապտիւլ Քէրիմ։ Սոյն երկիր ի Յունաց յափշտակեալ էր Փիրի Ահմատ, երկիր ըստ կարի էր ընդարձակագոյն, Փէյզի ակայն էառ Խ (40) ընտանիք եւ Զ (6) ընտանիք ընդ իւր։ Ել Փիրի Ահմատի ի Հայոց ազ-

պէն էին մշակք Ջող Տանիկի ժողովրդէնէ Զ[12] (6) ընտանիք, ետ որդւոյ իւրում։ Նոքա ժողովէին ցորեան եւ զամենայն ընդեղէնս հաւաքէին ի միում վայրի, առնէին կալս, [եւ] տեղին յորշորշեցաւ ճասկալ։ Իսկ Փեյզի ական յոյժ սիրէր զմշակս եւ վասն սիրոյ նոցա զՏէր Նշիկ քահանայն եւ[ս] էառ ընդ մշակացն հանդերձ՝ զի մատակարարեսցէ զհոգեւոր պիտոյս նոցա, յատկացոյց ռոճիկս քահանային։ Նաեւս ապառիկ վճարմամբ՝ յաղագս ի հոգեւոր մխիթարութիւն մշակաց եւ հաստատութիւն նոցա, անդ շինեաց փայտակերտ մատուռ, անուանեցաք Սբ. Նշան եւ կատարեցաք յամսեանն Տրէ Ա.։

Ի բանակէ Ջող Տանիկի տարեալ էր Խ (40) տուն, ուստի ի Յունաց էր որ կատարէին զգործս երկրագործութեան նախ քան առ ի պանդխտութեան մերում։ Յորժամ ետես զմեզ ի հեզութեան մերում՝ զսիրտ նորա յարեցաւ ի մեզ, տարեալ զքառասունսն քահանայիւ հանդերձ բնակեցոյց կեդրոն յագարակի իւրում։ Իսկ գալով Յունաց՝ յոյժ խորշէր, զի էին ապերախտ ու դող էին։

Ի Յունաց բազումք էին, որ բնակէին ի լերինն Բանայիյու Դոսպիթ, որ թարգմանի ի լեզուի մերում Տուն Աստուածածնայ։ Սոքա յոյժ վնասակար էին մեզ եւ ատարաց, հոգեւոր հայրն մեր Տէր Կարապետ բազմիցս թախանձէր իշխանն մեր Փէյզի ական հալածել զնոսա յաստի եւ զլեառն հանձնել Հայոց։ Զխնդիր քահանային խոշիմն ինչ երեւիւր, զի ի նոյն միջոցի խարխուլ տէրութիւն կայր յերերման. ակնյայտնի երեւէր մօտալուտ կործանումն։ [Փէյզի ական ասէր]. Յորժամ բարձցի խոչնդոտ տէրութիւնն՝ սոքա ամենեքին կամ այրենք եւ կամ աքսորեմք, եւ կամ շարդեմք։ Եթէ կամին զանձինս իւրեանց ապրեցուցանել՝ ընդունելով ընդունին զսուրբ կրօնն մեծ եւ սուրբ մարգարէին Մուհամմէտի։

ՌՆԺ (1410) ամին ի պանդխտութեան մերում ի Մա[րա]շ կոչեցեալ քաղաքէն Կիլիկիոյ, չհանդուրժեալ[13] տառապանաց Արաբացւոց, ութսուն ընտանիք գաղթեալ դիմեցին առ մեզ։ Սոքա յոյժ խրտչէին ի Յունաց, կամէին ի կենդանւոյն յօշոտեալ այրել։ Իսկ բարեկամն Հայոց Փէյզի ական յոյժ ուրախացաւ՝ որժամ ետես զնոսա, զի էին քաջ սպառազմիկք։ Տարեալ բնակեցոյց առ ի լերինն կոչեցեալ Դոսբիթ՝ յաղագս պահպանելոյ զկալուած որդւոյն իւրոյ Ասլտիւլ Քէրիմայ, եւ միշտ խրախուսէր զՀայս աներկիւղաբար մարտնչիլ ընդ Յոյնս։

Յամին ՌՆԺԵ (1415) Հայք եւ այլազգի մսուլման[ք] յԱնատո-

յիտ խումբ-խումբ գաղթէին ի կողմանս Բիւթանիոյ, իսկ Յոյնք մեկնէին ի տեղոջէ իւրեանց։ Աւերեցան քաղաք[ք], եւ ի տեղի Յունաց բնակէին Հայք, իսկ այլազգի մուսլմանք կազմէին բնակելոյ իւրեանց յատուկ գիւղս։ Ոմանք ի Յունաց ընդունէին դէնն Մուհամմէտի[14] տաճկանային։ Ի սոյն ամի ի Նեղս արկին ի Մարաշէ գաղթեալ Հայք Դոսպիթարնակ. Հայք ի դրգմանէ Փէյզի ակային երկու աղջկունս առեւանգեցին, Հայք դալով առ Տէր Նշիկ, ըստ Հայաստանեայց ծիսի արարողութեամբ պսակեցան։ Ի սոյն դիպուածէ չարացան Յոյնք եւ կամէին վնասել, բայց իւ իւիք ոչինչ էին ձեռնհաս, զի քաջ եւս տեղեակ էին յայլազգաց ձեռնատու լեալ առ Հայս։

ՌՆԺԶ (1416) ամին փախեան Դոսպիթարնակ Յոյնք, այրելով զաւանն եւ զլեառն ամբողջովին. ոչ մի ինչ զերծաւ ի հրոյ։ Անդ զետեղեցան եւ կազմեցին բնակարանս Հայք՝ գաղթեալ ի Մարաշէ եւ կազմեցին մատուռ Սբ. Աստուածածնայ եւ կատարեցին նաւակատիք[15] Նաւասարդի Դ։ Յետ կատարելոյ զնաւակատիս մատրանն խնդրեցին առ իւրեանս քահանայս՝ վասն կատարելոյ զծէսս[16] Հայաստանեայց եկեղեցւոյ. փոխան քահանայի ածին առ իւրեանս զծերունի Սրապիոն սրբակեաց անապատական կուսակրաւն վարդապետն։ Նա բազում դուրգուրանաւք շահէր[17] զհաւատացեալ ժողովուրդն իւր եւ առ մատրանն կազմեաց իւր ծախիւք ԺԸ (18) խուցս, եւ բազումք յայլազգեաց այց ելանէին առ Տիրամաւր փայտեայ պատկերին, եղեւ անդ ուխտատեղի Հայոց ազգին։ Փայտեայ պատկերն գտին անգ առ ի փլատակաւք հրկիզեալ յաւերակաց։ Դոսպիթի Բանայիու բառն փոխեցաւ Տուն Աստուածածնայ։

Յամի ՌՆԻ (1420) Սարիու Տաւղանցի Յոյնք ի Ե Հրոտից ամսոյ յաւուր սպայծառակերպութեան Տեառն գնացեալ զարտորայս Ջոջ Տաւնիկի սկսանին վառել[18] վասն հակառակութեան։ Ի սպասաւորացն[19] Ջոջին, մանաւանդ Չէյպակ Կարոն, բազում աշխատանաւք ըմբռնեալ յերից ի Յունաց, ածին զաւաղակսն ի Տաւնիկաշէն, իսկ Ջոջն մեր յանձնեաց Փէյզի ակային։ Նա կապանաւք բանտարկեաց ի տան իւրում, յետ միոյ ամաց զերկուսն յաւաղակաց գլխատեաց, իսկ մին յերիցունց[20] յանդէպ յաւանի իւրեանց ի Սարիու Տաւղանի ի վերայ բլրոյ խաչեաց, որ կոչիւր Իլիա։ Ի վերայ գագաթան բլրոյս դոյ ակն ջրոյ ցուրտ եւ քաղցրահամ։ Իսկ մենք սաստիկ տխրեալ ցաւեցաք ի սոյն եղելութեան։ Նա եւս տեսեալ մերս Նե-

ղութիւն՝ սաստիկ յանդիմանեաց զմեզ, ասելով. «Դու փութփարատլարա պոլլա խախուշուր»[21]: Իջուցեալ Յունաց անդ թաղեցին։

Ի թիւ Տեառն ՌՆԼ (1430) Սիսեան գիւղն Յունաց աւարելով այրեցին այլազգիք, ափսոս, զի գիւղն այն յոյժ գեղեցիկ էր՝ յանդէպ Սապանճի գիւղն, որ զճանապարհաւն տան Աստուածածնայ ի վերայ բարձր բլրոյ, անուն յաւերակի անուանեցին Ջորթլան եւ մսլուման մեծատունք Ճ (100) տան չափ անդ բնակեցան։ Եւ առեալ նոցա, ի Հայոցս քաջաց եղելոց առին ի մէջ իւրեանց, իսկ Փէյզի ակայն դարձոյց առ մեզ եւ սաստիկ յանդիմանեաց զՋոջ Տանիկ հայրն մեր, ասելով. «Առանց գիտութեան իմոյ ոչ ոք մեկնեսցի յաստեացս, զի նոքա ոչ բարեմտութեամբ տարին սոքա յաստենէ»։

ՌՆԽ (1440) թուին Տէր Կարապետ եւ հայրն իմ դպիր Գրիգոր վախճանեցան, իսկ ես՝ մեղսալից Սեւաստս, Ջոջ Տանիկի եւ ընդհանուր ազգայնոց ընտրութեամբ, եւ Տիգրան անուամբ մի ազգային յեղբարց գնացաք ի քաղաքն Պրուսա, առաք զկարգ քահանայութեան։ Ես անարժանս կոչեցայ Տէր Գրիգոր, իսկ Պարսամեան Տիգրանն՝ Տէր Կարապետ։ Ի տան Աստուածածնայ զձեռնադրող հոգեւոր հայրն մեր էր Աբրահամ սրբազան արքեպիսկոպոս։ Տէր Կարապետ հոգեւոր եղբայրն իմ գնաց ի տեղի իւր առ Մարաշցի եղբարս մեր ի տան Ս. Աստուածածնայ։ Յաւուր յայնմիկ ուխտեցի ես գրութիւն հաւր իմոյ շարունակել։

Թուին ՌՆԾԳ (1453) Տեառն Փրկչին մերոյ, իսկ յԱրամազնիանս թուին ինն հարիւր Բ յամսեանն Մարերի ԻԱ, Յունաց ամսոյ Մայիսքսան եւ ութ Սուլթան Մահմէտն բացաւ մայրաքաղաքն Յունաց Կ. Պոլիսն... Ջկնի տիրելոյ ՌՃԻԱ (1121)[22] Յունաց անց կացաւ ի ձեռս Տաճկաց։ Յետ երկուց ամաց եղեւ մարդահամար ի կողմանս յայսմիկ եւ ել հրաման կազմել բնակարանս փայտեայ կամ քարէ։ Ի միջի ԾԵ (55) ամաց եղաք Ո (600) տուն, բացի Փէյզի ակայի կալուածական ծառայից, զի Խ (40) ընտանիք վասն իւր եւ Զ (6) ընտանիք որդւոյ իւր Աբտիւլ Քէրիմ[23] Փիրի Ահմատի. Խ (6) ընտանիք եղին Ծ (50) ընտանիք, իսկ Զ (6) ընտանիք Փէյզի ակայի որդւոյ եղին Ժ (10) ընտանիք։

Ամենեքինքս կազմեցաք բնակարանս փայտեայ. եթէ ոք անսաստեսցէ հրամանաց արքայի՝ յաքսոր մատնեսցի անձն այն։ Եւ եղեւ գլխահարկ. տասնեւհինգ տարեկանէ վեր պարտի վճարել առ տէրութիւն Մ (200) փարա մինչ ի ԿԵ (65) ամս։ Ոչ թէ միայն առ

Հայս, այլ եւ ի Յունաց ամննցունցս եղեւ գլխահարկս, իսկ ազքատաց կամ պանդխտոց տուրս ոչ գոյ. եթէ գզիրն ստուգեսցէ թէ աղքատ է Հայ՝ եւ տուրս[24] ոչ առնեն։ Իսկ ի Յունաց աղքատք Մ (200) փարա, հարուստք երկու հարիւր Ծ (50) փարա պարտին վճարել առ տէրութիւնն, իսկ քահանայք եւ վարժապետք ոչ վճարեն տուրս մեք եւ Յոյնք։ Ի տանց եւ յեկեղեցեաց եւս առնեն. 2 փարա տանց, իսկ յեկեղեցեաց եթէ բարուկիր իցէ՝ ՃԿ (160) փարա։ Եւ եկն առ մեզ մուդիր Մուսալլիմ ակայն [եւ] Նագիպ Մահմուտ պէկն, նոքա դատելոց են զմեզ մանրամասն ըստ կանանի, իսկ Նիւոմիդիա էր Ղայմախամ սէկ։ Իսկ Սարիու Տողանիցիք եւ Սապանճիացի Յունաց մեծամեծաց մեկնեցան դէպի Վրաց տուն, եւ ոմանք՝ ի կողմանս Ատրնայի եւ Փիլիպէու կողմն։ Ըղկնի երից ամաց՝ ՌՆԾԸ (1458) սկսան հարկս առնել ի ննջեցելոց Ժ-Ժ փարա (10) ի մեծաց, իսկ ի փոքունց Զ-Զ փարա (6)։ Առանց հրամանագրի դենպետին թաղելոյ հրաման ոչ գոյ։ Հրամանագիր դենպետին.

«Լապրսի յիպասի բաթրանի համիլի թաճի շայթանի մահրումի տարկեահի քոջա փափաս։ Փուլանի քուփարանին աւլլի փուլան քուփարայ մուրտ ալմուշ ալտուղունտան լեշայի մահրուքէսի սիղա ինհաճ ուլունիր թովրաք տախի քափուլ էթմեզ իսա նէ չարէ նէ չարէ քէյիւն տիշարիսինտա պիր խանտակ աչիպ ինիշա աթիպ թօփրախ աալտուրիպ չըղնայիպ չիյնայիպ կէլէսին ղոջա փափաս. չէի Հասան Մուհարրամային»[25]:

Առաջ խիստ լաւ էին ընդ մեզ, իսկ յետոյ աւերեցան ընդ քրիստոնէից, մինչ զի էշ կամ ձի հեծանելոյ հրաման ոչ ետուն քրիստոնէից, այլ միայն ջորի։ Նաեւ շեղակի կարմիր սիկէ կամ դեղին, կանաչ ընաւ երբէք ոչ թէ զգենլոյ, այլեւ բռնելոյ եւս հրաման ոչ գոյ։ Ննջեցեալք յորժամ[26] տանին յեկեղեցին՝ առանց երգեցողութեան, եկեղեցւոյ ժամուն զանգակի եւս հրաման ոչ գոյ, այլ տախտակահար կամ ժամակոչ այրն պարտի ցած ձայնով կոչել։

Ի թուին ԹԺԺ (910/1461), ի թիւ փրկչական ՌՆԿԱ (1461) տեարք Ստամպոլայ ի խորհուրդ մտին յերկուց գետաց միացման՝ ի յարեւմտակողմանէ գիւղիս ղգետն Սապանճիու թափել ի Սաքարիսի գետըն... Աստուած ամբարտաւանից հակառակ կայ... եւ ցրուէ զխորհուրդս նոցա, եւ յաւրէ յայնմանէ կոչեցաւ աւանս Ատա կամ Ատաճըգ ի Տաճկաց բարբառ, իսկ մեք յորջորջէաք Ծանիկաշէն, իսկ Սարիու Տաւղանիս գիւղն Յունաց Սարը Տաւղան՝ յաղագս չէկ ծնա-

նելու կանանց։ Իսկ Փէյզի ակայի երկրագործաց որ շինիցին զտունըս իւրեանց տեղին կոչեցաւ Փէյզի ակային անուամբ Փէյզիլի։ Յաղագս անասնաբոյծ ժողովրդոց կաղմնաց տունս Ժ (10), անուանեաց Թամլըք՝ Փէյզինին Թամլըղը վէ աւնըն գուլլարի։ Եւ ի սահմանացս արտաւրէից արտաշափ մի տեղեաց շիննաց իբր պահապանաց բնակարանս Լ (30) տունս, յաղագս խնձորէնեաց կոչեցին Փէյդինին էլմալըղը, էլմալըք։ Իսկ անդ գտանիւր ի Տաճկաց Ը (Տ) տուն Փէյզի որդւոյ Ապտիւլ Քերիմայ[27] տեղւոյն, կոչեցին յանուն Ահմատայ ծերոյն Փիրի Ահմատ։ Անդ եւս կազմեցին մատուռ իմն Սբ. Ստեփաննոս անուամբ։ Դուսբիթ գիւղն Յունաց անուանեցին Մարաշ[28] Գարիպլէրի[29]։

Ի Թուին Հայոց ԹԺԲ[30] (912/1463), իսկ փրկչական Թուի ՌՆԿԲ (1462) եկն նոր միւսէլլիմն։ Սա ևս արգելոյր խաւսիլ Յունաց իւրեանց բարբառով, այլ Թուրքերէն պարտին խաւսիլ։ Բազմիցս ընդդիմացան Յոյնք՝ բնաւին ոչինչ, գի զդպրոցս նոցա միշտ խուզարկէին ի Յունաց ազԹարմայք, որք ընդունակ կային զդէնս Տաճկաց։ Սոքա էին քննիչք[31] Յունաց, իսկ մեք պահեցաք զմայրէնի լեզուս մեր շնորհիւ Փէյզի ակային. նա զմեզ յանզորրու պահէր։ Իսկ Սարիու Տողանցիք կային յամառ վիճակաւ, բայց ի նոցանէ եւս դաղԹեցին ի տար աշխարհ յերկիւղի այլազգեաց. ոմանք նահատակեցան ի հաւատոյն[32] Քրիստոսի, մնացին անդ իբր աննշան անձինս՝ նոքա եւս աղքատ վիճակաւ, սահմանք[33] արտաւրէիցն նոցին՝ մինչ ի կամուրջն Խ (40) կամար, իսկ այլազգիք զբազումս յափշտակեցին եւ յանդէպ կամրջին արարին կրաւնատեղի իւրեանց։ Բնակէին անդ կուսակրաւն դառվիշաք յաղագս աղաւԹելոյ կենաց արքային եւ պահել անբիծ զիսլամուԹիւն, եւ արեւելակողմն աւանիս գոյ դարձեալ բնակարանս դառվիշաց առ փոքրիկ լճակաւն։ Աստ ի Յունաց բազումս կոտորէին կամ Թլփատէին, եւ զբազում աղջկունս իւրացուցեալ կամ վաճառէին եւ կամ ամուսնանային ընդ նոսա, վասնզի անհովիւ եւ անտէր մնացին[34] Յոյնք։ Եւ զմեզ սիրէին իբր եղբայրս իւրեանց, ասելով. «էրմէնի մահաճըրլար պիզիմ ղարտաշլար»[35], իսկ գալով Յունաց՝ «Խնզիր ռում կեավուռ խըյանէԹ խիռսիղլար»[36]։

Ահա Թողում դուզնաքեայ շարակարգեալ անցքս ի յետադայիցն. որք ընԹեռնուն զսա՝ ի միտս ածցին Թէ զինչ նեղուԹիւն եւ գիպուծաւք եկաք աստ բնակել, կամեցաք եւ եղաք ընդ քրիստոնեայս Քրիստոսի ծառայ [եւ] ընդ մսուլմանս՝ մսուլման, մինչ անցաք

ընդ նեղ պողոտայէն։ Կամէի բազում գրել, բայց նախ պաշտամանծանր է եւ երկրորդ՝ ծերացայ յոյժ, ոչ եւս կարող եմ շրջիլ աստ եւ անդ... Փառք եւ գոհութիւն Արարչին մերոյ տնօրէնութեան, զի ածելով հասոյց զմեզ Երկիր աւետեաց իբր զորդիս Աբրահամու։ Աւրհնեալ է կամք նորա յաւիտեան, ամէն։ ՌՆԿԶ (1466) թուին փրկչական, իսկ թուին Հայոց ԹԺԴ[37] (914/1465)։

SAMVEL MOURADIAN

THE XV CENTURY HISTORICAL SOURCE

A historical source concerning the period of organizing the Armenian settlements in western Asia Minor was published in January 31 and February 2, 1912, in the newspaper «Byzandion» and later on in A. Piperian's and V. Eghishian's book «History of Adapazar Deified City» (Paris, 1960). However, it wasn't included in the «XV Century Manuscript Colophons» compiled by L. Khachikian and «Small Chronicles» by V. Hakobian.

The source witten by clergyman Maruke, according to S. Purmayan's commentary in «Byzandion», initially belonged to clergyman Hovhannes Sgherdtsi and was copied by S. Saprichian in 1889. Two decades later it was sent to G. Chuvanchian and then published by S. Purmayan. S. Saprichian evidenced that the «Chronicle» «...starts from year of 900 and goes up to year of 1500 consisting of 28 stories».

Until now, the clergyman Maruke is unknown in Armenology, H. Acharian mentions five clergymen with the name Maruke but none of them is the source compiler. Several circumstances allow to look for him in Jerusalem. Two clergymen named Maruke are mentioned in the XV century manuscripts. It is quite possible that one of them, the priest of St. Harutyun church, is the compiler of our source.

The main purpose of father and son Grigors, the authors of the text under investigation, is to present the history of 400 families, their relations with Greeks, etc., who, as a result of Tamerlane campaign, were forced to leave their homeland (Sebastia) and settle in Adapazar.

Three main episodes must be marked in this text.

1. Until the recent times only name of bishop Hevakim was known as the ecclesiastical leader of Bursa diocese. The source mentions another name of Bursa's ecclesiastical leader in 1440 bishop Abraham. It confirms that mishop Hovakim (later on the

first Armenian Patriarch in Constantinople) alreaby had left Bursa before 1440.

2. The text reveals how the extension of the Ottoman Empire reflected on the Greeks, who were partly forced to lave their homeland, while others were converted into Mohammedanism.

3. The source contains new facts on settlement of Kalkedonian-Armenians (diophysites), their interconfessional, interethnic relations, etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Բուրն*

2 *Վենտէմիր*

3 *յիշողութեան*

4 *ընչեղ*

5 *կոչեցելոյ*

6 *Հռիփսիմեայ*

7 *մըսլըմանք*

8 *ջու*

9 *Իմա՛ «Այլակրոն հայերս»*

10 *ուղուղ*

11 *Իմա՛ բէն (որդի)։*

12 *Ջ (900)*

13 *գհանդուրժեալ*

14 *Մահմետի*

15 *Նաւակատիկ*

16 *զծեսս*

17 *շահեր*

18 *վազել*

19 *յապաստուրացն*

20 *յերկոցունց*

21 *Իմա՛ «Այս հեթանոսներին այսպես է վայելում»։*

22 *+ տիրելոյ*

23 *Արտրլջէրիմ*

24 *դուրս*

25 *Բովանդակությունը թարգմանաբար. «Կուպրի դույն զգեստ հագած. սատանայի թագը գլխին դրած, Աստծո առյանից վտարված ավագ քահանա։ Փալան փրցնողի որդու՝ փալան փրցնողի մահվան պատճառով նրա դիակը փտել է, և թեև հողին անգամ արժանի չէ, ստիպված գյուղից դուրս մի փոս փորելով, մեջը գցելով և վրան հող լցնելով ոտքերով տրորել գերեզմանն ավագ քահանայի։ Շեյխ Հասան Մուհարրամայինն»։*

26 *ցորժամ*

27 Գերիմայ

28 Մառաշ

29 Իմա՛ «Պանդուխտներս»

30 ԹԺԵ

31 զրննիչս

32 հաւատոցն

33 զսահմանս

34 մնացեն

35 Իմա՛ «Վերաբնակեցված հայերը մեր եղբայրներն են»

36 Իմա՛ «Ստոր հույներն անհավատ նենգ թալանչիներ են»

37 ԹԺԳ